



ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳԻՐ

Խմբագրություն՝ խմբ. ԿԱ01
(Ակտիվի դաս՝ հրապարակային)

Ապահովագրության դաս, ենթադաս	Առողջության ապահովագրություն՝ ամրագրված դրամական հատուցմամբ
Ապահովագրող	«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ
Ապահովագրված անձ	18-65 տարեկան ռեզիդենտ ֆիզիկական անձ
Ապահովագրական գումար / առավելագույն հատուցման չափ/	
Տարբերակ 1	500,000 ՀՀ դրամ
Տարբերակ 2	1,500,000 ՀՀ դրամ
Տարբերակ 3	15,000,000 ՀՀ դրամ
Տարեկան ապահովագրավճար	
Տարբերակ 1	12,000 ՀՀ դրամ
Տարբերակ 2	36,000 ՀՀ դրամ
Տարբերակ 3	360,000 ՀՀ դրամ
Պայմանագրի գործողության ժամկետ	1 տարի
Ապահովագրության տարածք	Ամբողջ աշխարհ
Ապահովագրական ծածկույթ	Կրիտիկական հիվանդություններից ապահովագրություն
Չհատուցվող գումար	Չի կիրառվում

1. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

Ապահովագրողն իրականացնում է ապահովագրական հատուցում հետևյալ կրիտիկական հիվանդությունների ախտորոշման դեպքում՝

- *Քաղցկեղի չարորակ հիմնական տեսակներ*
- *Սրտամկանի կաթված (ինֆարկտ)*
- *Ուղեղի կաթված (ինսուլտ)*
- *Կենսականորեն կարևոր օրգանների փոխապատվաստում*
- *Խորը այրվածքներ*
- *Կոմա*

Քաղցկեղի չարորակ հիմնական տեսակներ II և III աստիճանների առաջնային ախտորոշված քաղցկեղի չարորակ հիմնական տեսակները, որոնք ունեն հիստոլոգիական հաստատմամբ դրական ախտորոշում և բնորոշվում են չարորակ բջիջների անվերահսկելի աճով և հարակից հյուսվածքների ախտահարմամբ:

Սրտամկանի կաթված (ինֆարկտ)՝ սրտամկանի մասնակի մեկուսացում տվյալ օրգանի համապատասխան հատվածների արյան շրջանառության խախտման հետևանքով: Ախտորոշումը պետք է ամրագրված լինի ՀՀ առողջապահության նախարարի 2018թ. հունիսի 29-ի N1666-Ա հրամանով ինֆարկտի համար սահմանված

տիպիկ չափանիշների առկայությամբ:

Ուղեղի կաթված` արյան սնուցման բացակայությամբ կամ արյունազեղումով պայմանավորված ուղեղի հյուսվածքների մահ, որը բերում է անվերադարձ նյարդաբանական դեֆիցիտի` առկա կլինիկական ախտանիշներով: Բացառություն են կազմում տրանզիտ իշեմիկ հարձակումը և ուղեղի հյուսվածքների վնասվածքը կամ արյան անոթների վնասումը:

Կենսականորեն կարևոր օրգանների փոխապատվաստում` ոսկրուղեղի, սրտի, երիկամի, լյարդի, թոքի կամ ենթաստամոքսային գեղձի փոխապատվաստում:

Խորը այրվածքներ` երրորդ և չորրորդ աստիճանի այրվածքներ, որոնք ծածկում են մարմնի մակերեսի 20% և ավելին:

Կոմա` անգիտակից վիճակ, որը բնորոշվում է արտաքին գրգիռների հանդեպ ռեակցիայի թուլացմամբ կամ բացակայությամբ, ռեֆլեքսների մարմամբ մինչև լրիվ անհետանալը, պահանջում է կենսաապահովման սարքերի օգտագործում 96 ժամ և ավելի շարունակվող ժամանակահատվածում և հանգեցնում է մշտական նյարդաբանական դեֆիցիտի կլինիկական ախտանիշների պահպանմամբ:

2. ԾԱՏԿՈՒՑԹԻՑ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապահովագրողն Ապահովագրական հատուցում չի իրականացնում հետևյալ հիվանդությունների, վիճակների և դրանց հետևանքների դեպքում`

- Նախապես առկա կրիտիկական հիվանդությունների վիճակները,
- Դժբախտ պատահարի հետևանքով առաջացած կրիտիկական հիվանդություններ և վիճակներ,
- սույն ապահովագրության ռիսկերում չներառված հիվանդություններ և վիճակներ,
- բնածին արատներ,
- քրոնիկ հիվանդություններ,
- ճգնաժամային (կրիտիկական) հիվանդության ախտանիշները կամ վիճակն առաջին անգամ ի հայտ են եկել կամ առաջին անգամ ախտորոշվել են մինչև ապահովագրության պայմանագրի գործողությունից 90 օրացուցային օր անցնելը (*սպասման ժամկետ*),
- ապահովագրված անձի կողմից թույլ է տրվել այնպիսի գործողություն, որը դատաքննչական մարմինների կողմից որակվել է մտացածին կամ դիտավորյալ հանցագործություն,
- ապահովագրված անձի` ալկոհոլի, թմրանյութերի և թունանյութերի օգտագործման և դրանց ազդեցության տակ գտնվելու հետևանքով առաջացած հիվանդություններ/վիճակներ,
- զենքի կամ զինամթերքի հետ անթույլատրելի կամ անզգույշ վարվելու, ռազմական գործողության, խռովության, ահաբեկչության, քաղաքացիական պատերազմի, ռադիոակտիվ ճառագայթման, բակտերիոլոգիական կամ քիմիական վարակվածության,
- Ապահովագրված անձի կողմից ինքնասպանություն, ինքնասպանության փորձ կամ կանխամտածված անդամախեղություն կամ Ապահովագրված անձի անմեղսագիտակ վիճակ,
- հոգեկան հիվանդություններ, շեղումներ, ներոզներ,
- դեղորայքի, դեղանյութերի չարաշահում,
- տրանզիտոր իշեմիկ հարձակումներ, վերտեբրոբազիլյար իշեմիկ հարձակումներ,
- մաշկի, ձվարանների, շագանակագեղձի չարորակ ուռուցքներ Հոջկինի հիվանդություն, Կապոզիի սարկոմա և այլ` ապահովագրության ծածկույթում չներառված օնկոլոգիական հիվանդություններ,
- ՄԻԱՎ- վարակ, ՁԻԱՀ,
- Շաքարային դիաբետ և զուգակցված սիրտ անոթային համակարգի հիվանդություններ,
- պետական պատվերի ծրագրերում ներառված հիվանդություններ/վիճակներ,

- ցանկացած տեսակի բնածին և ձեռքբերովի հիվանդություններ, որոնք պահանջում են դինամիկ հսկողություն և (կամ) պահպանողական բուժում
- ապահովագրված անձի կողմից պրոֆեսիոնալ կամ վտանգավոր սպորտաձևերով կամ հոբբիներով կանոնավոր և երկարատև զբաղվելը
- պատերազմ կամ պատերազմական գործողություններ (անկախ այն հանգամանքից պատերազմ հայտարարվել է, թե ոչ)
- ահաբեկչական գործողություն:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԳՈՒՄ

Ապահովագրողն ապահովագրական հատուցումն իրականացնում է *միանվագ*՝ առաջնային ախտորոշումից հետո անընդմեջ 30-օրյա *հետաձգված ժամկետը* լրանալուց հետո (առաջնային ախտորոշման օրվանից հաշված՝ կրկնակի ախտորոշումը հաստատվել է 30 օրացուցային օր հետո):

Հատուցում վճարվում է նշված հիվանդությունների առաջին անգամ ախտորոշվելու դեպքում:

** Սույն ծրագիրը նախատեսված է 30 և ավելի անձանց համար*